

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ

(առ 01.09.2011թ.)

Մույն ուղեցույցը ներառում է ՀՀ օրենքների եւ այլ իրավական ակտերի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի ընդունած որոշումների մասին տեղեկատվություն, մասնավորապես.

- քննության առնվաժ ՀՀ օրենքները եւ այլ իրավական ակտերը՝ ըստ այբբենական հերթականության.
- իրավական ակտի դրույթները՝ ըստ հոդվածների թվագրման հերթականության.
- սահմանադրական դատարանի որոշման համապատասխան կետերը՝ ըստ որոշման մեջ առկա համարակալման.
- սահմանադրական դատարանի որոշման ամսաթիվը:

Ուղեցույցը հնարավորություն կտա համառոտ եւ դասակարգված տեղեկատվություն ստանալ կոնկրետ իրավական ակտի (դրա տարբեր դրույթների) մասին սահմանադրական դատարանի կողմից ընդունված բոլոր որոշումների վերաբերյալ: Ուղեցույցը նաեւ օգտակար կարող է լինել ինչպես իրավաստեղծ, այնպես էլ իրավակիրառ գործունեության մեջ ներգրավված անձանց, ՀՀ սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների, հանրության լայն շրջանակի համար:

Մույն ուղեցույցը կազմել է ՀՀ սահմանադրական դատարանի անդամ Արեւիկ Պետրոսյանը:

N	ՆՏ օրենքները եւ այլ իրավական ակտերը	Իրավական ակտի դրույթը	ՄԳ որոշումը	ՄԳ որոշման ամսաթիվը
1.	«Ազգային ժողովի կանոնակարգ» ՆՏ օրենք (ընդունվել է 20.02.2002թ.)	12 եւ 14-րդ հոդվածներ	<p>1. «Ազգային ժողովի կանոնակարգ» ՆՏ օրենքի 12-րդ հոդվածը համապատասխանում է ՆՏ Սահմանադրությանը:</p> <p>2. «Ազգային ժողովի կանոնակարգ» ՆՏ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Պարզամավորը կարող է դուրս գալ խմբակցությունից՝ այդ մասին գրավոր փեղյակ պահելով համապատասխան խմբակցության ղեկավարին» դրույթը՝ քվեաթերթիկներում որպես ընտրական ցուցակի թեկնածուներ չնշված պարզամավորների առնչությամբ այնքանով, որքանով նպաստում է Ազգային ժողովում ժողովրդի ազատ կամարտահայտմամբ ձեւավորված քաղաքական հավասարակշռության փոփոխությանը, ճանաչել ՆՏ Սահմանադրության 1-ին, 2-րդ եւ 7-րդ հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:</p>	30 հունիսի 2009 թվականի ՄԴՌ - 810
		35-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերի վերջին նախադասություններ, 49-րդ հոդվածի «ե» կետ, 112-րդ հոդվածի 2-րդ կետ, 4-րդ կետի վերջին	<p>1. ՆՏ Սահմանադրության 27 հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերին հակասող եւ անվավեր ճանաչել «Ազգային ժողովի կանոնակարգ» ՆՏ օրենքի 35 հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերի վերջին նախադասություններում, 112 հոդվածի 2-րդ կետով, 4-րդ կետի վերջին նախադասությամբ եւ 5-րդ կետով նախատեսված դրույթները:</p> <p>2. ՆՏ Սահմանադրության 62 հոդվածին հակասող եւ անվավեր ճանաչել «Ազգային ժողովի կանոնակարգ» ՆՏ օրենքի 49 հոդվածի «ե» կետով նախատեսված դրույթը:</p>	16 փետրվարի 2007 թվականի ՄԴՌ - 678

		նախադասություն և 5-րդ կետ		
2.	«Անշարժ գույքի մասին» ՆՏ օրենք (ընդունվել է 27.12.1995թ.)	22-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասեր	<p>1. «Անշարժ գույքի մասին» ՆՏ օրենքի 22 հոդվածի երկրորդ մասը, համաձայն որի «Նասարակության և պետության կարիքների համար անշարժ գույքի համարժեք փոխհատուցման չափը սահմանվում է ՆՏ կառավարության որոշմամբ՝ հիմնվելով ՆՏ կառավարության և օտարման ենթակա անշարժ գույքի սեփականատիրոջ միջև բանակցությունների արդյունքի և օտարման ենթակա անշարժ գույքի սեփականատիրոջ գրավոր համաձայնության վրա», համապատասխանում է ՆՏ Սահմանադրությանը:</p> <p>2. «Անշարժ գույքի մասին» ՆՏ օրենքի 22 հոդվածի երրորդ մասը, համաձայն որի «Եթե անշարժ գույքի սեփականատերը համաձայն չէ ՆՏ կառավարության կողմից գույքի օտարման կամ փոխհատուցման չափի հետ, ապա ՆՏ կառավարությունը անշարժ գույքի օտարումը կարող է իրականացնել միայն դատական կարգով», չի համապատասխանում ՆՏ Սահմանադրության 8 և 28 հոդվածներին:</p> <p>Անձի սեփականությունը՝ ՆՏ Սահմանադրության 28 հոդվածի երկրորդ մասով նախատեսված հիմքերով կարող է օտարվել, իսկ նրա համաձայնության բացակայության դեպքում պետության կողմից սեփականության իրավունքը դադարեցվել միայն կոնկրետ անշարժ գույքի վերաբերյալ օրենք ընդունելու միջոցով, որում կհիմնավորվի օտարման բացառիկ կարեւորությունն ու նշանակությունը և կնշվի, թե օտարվող անշարժ գույքը հասարակության և պետության որ կարիքների բավարարմանն է ուղղ-</p>	27 փետրվարի 1998 թվականի ՄԴՈ - 92

			<p>վելու:</p> <p>Օրենքը միաժամանակ կառավարությանը կպարտավորեցնի, համապատասխան ֆինանսավարձերի հաշվարկի հիման վրա, շուկայական գների հաշվառմամբ, կառավարության եւ օտարման ենթակա անշարժ գույքի սեփականատիրոջ միջեւ բանակցությունների արդյունքի եւ վերջինիս գրավոր համաձայնության հիման վրա սահմանել փոխհատուցման չափը, որը սեփականատիրոջ կողմից ենթակա է դարակյան վիճարկման:</p> <p>3. «Անշարժ գույքի մասին» ՆՏ օրենքի 22 հոդվածի չորրորդ մասը, համաձայն որի «Մինչեւ դարարանի որոշման օրինական ուժի մեջ մտնելը հասարակության եւ պետության կարիքների համար օտարման ենթակա անշարժ գույքի սեփականատերը պարտավոր է ձեռնպահ մնալ անշարժ գույքին վնաս հասցնելուց», չի համապատասխանում ՆՏ Սահմանադրության 8, 28 եւ 44 հոդվածներին:</p> <p>4. «Անշարժ գույքի մասին» ՆՏ օրենքի 22 հոդվածի հինգերորդ մասը, համաձայն որի «Նասարակության եւ պետության կարիքների համար անշարժ գույքի օտարման ընթացակարգը սահմանում է ՆՏ կառավարությունը՝ ելնելով սույն հոդվածի դրույթներից», չի համապատասխանում ՆՏ Սահմանադրության 8 եւ 28 հոդվածներին:</p> <p>ՆՏ կառավարությունը չի կարող հասարակության եւ պետության կարիքների համար անշարժ գույքի օտարման այնպիսի ընթացակարգ սահմանել, որը նրան կլիազորի նման անշարժ գույքի օտարման իրավունք:</p>	
--	--	--	---	--

3.	«Ավելացված արժեքի հարկի մասին» ՆՏ օրենք (ընդունվել է 14.05.1997թ.)	2-րդ հոդվածի 2-րդ մաս	3. «Ավելացված արժեքի հարկի մասին» ՆՏ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասը համապարասխանում է ՆՏ Սահմանադրությանը:	25 նոյեմբերի 2008 թվականի ՄԴՈ -780
4.	«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՆՏ օրենք (ընդունվել է 07.05.2002թ.)	10-րդ հոդվածի 3-րդ կետը	1. «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՆՏ օրենքի 10 հոդվածի 3-րդ կետը սույն որոշման մեջ ՆՏ սահմանադրական դատարանի արտահայտած հրավական դիրքորոշումների շրջանակներում համապարասխանում է ՆՏ Սահմանադրությանը:	26 մայիսի 2009 թվականի ՄԴՈ - 804
5.	«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՆՏ օրենք (ընդունվել է 30.04.1996թ.)	71-րդ հոդվածի 8-րդ կետը և 93-րդ հոդվածի 4-րդ կետը	1. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՆՏ օրենքի 71 հոդվածի 8-րդ կետի նախապայմաններ սահմանող՝ «... նա չի մասնակցել ժողովին կամ այդ որոշման դեմ է քվեարկել» դրույթը չի համապատասխանում ՆՏ Սահմանադրության 38 և 39 հոդվածներին: 2. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՆՏ օրենքի 93 հոդվածի 4-րդ կետը համապարասխանում է ՆՏ Սահմանադրությանը:	13 նոյեմբերի 1998 թվականի ՄԴՈ - 138
6.	«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՆՏ օրենք (ընդունվել է 25.09.2001թ.)	56, 57 և 58-րդ հոդվածներ	1. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՆՏ օրենքի 56-րդ հոդվածը սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած հրավական դիրքորոշումների շրջանակներում համապարասխանում է ՆՏ Սահմանադրությանը: 2. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՆՏ օրենքի 57 և 58-րդ հոդվածների սահմանադրականությունը որոշելու մասով գործի վարույթը կարճել:	13 հուլիսի 2010 թվականի ՄԴՈ - 903

7.	«Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 28.12.1998թ.)	7 եւ 19-րդ հոդվածներ	<p>1. «Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 7 հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:</p> <p>2. «Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 19 հոդվածը՝ ՍԳՈ-753 եւ սույն որոշումների մեջ սահմանադրական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:</p>	18 հուլիսի 2009 թվականի ՍԳՈ - 816
8.	«Դատախազության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 22.02.2007թ.)	55-րդ հոդվածի 13-րդ մասի առաջին նախադասություն	1. «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 13-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված դրույթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	4 մայիսի 2010 թվականի ՍԳՈ - 881
9.	«Դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 31.03.2004թ.)	1-ին հոդված (18 հոդվածի նոր խմբագրություն)	1. 2004 թվականի մարտի 31-ին ընդունված՝ «Դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով (18 հոդվածի նոր խմբագրություն) նախատեսված դրույթը, համաձայն որի՝ կենսաթոշակի ամենամսյա հավելավճարի որոշման համար հիմք է ընդունվում դատավորի գրադեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույթաչափի, այլ ոչ թե աշխատավարձի, 75 փոկոսը, ճանաչել ՀՀ Սահմանադրության 94 հոդվածի 1-ին մասի պահանջներին հակասող եւ անվավեր:	20 սեպտեմբերի 2006 թվականի ՍԳՈ - 647
10.	«Զինձառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 27.10.1998թ.)	6 եւ 8-րդ հոդվածներ	1. «Զինձառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	10 փետրվարի 2010 թվականի ՍԳՈ - 865

			<p>2. «Զինձառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՆՏ օրենքի 8-րդ հոդվածը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան փրված բովանդակության մասով, որով սահմանափակվում է անձի իրավունքը կենսաթոշակը նշանակելուց հետո կատարել վերընտրություն, ճանաչել ՆՏ Սահմանադրության 31 եւ 83.5-րդ հոդվածների պահանջներին հսկասող եւ անվավեր:</p>	
11.	<p>«Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների եւ ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՆՏ օրենք (ընդունվել է 26.12.2002թ.)</p>	8-րդ հոդվածի 1-ին մաս	<p>1. «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների եւ ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՆՏ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով գործի վարույթը կարճել՝ հիմնվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32 հոդվածի 3-րդ մասի, 60 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի եւ 69 հոդվածի 1-ին եւ 7-րդ մասերի վրա:</p>	4 ապրիլի 2008 թվականի ՄԴՈ - 747
12.	<p>«Կուսակցությունների մասին» ՆՏ օրենք (ընդունվել է 03.07.2002թ.)</p>	31-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 3-րդ կետեր	<p>1. «Կուսակցությունների մասին» ՆՏ օրենքի 31 հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 3-րդ կետերի դրույթները ճանաչել ՆՏ Սահմանադրության 28 հոդվածի 2-րդ մասին եւ 43 հոդվածին հսկասող եւ անվավեր:</p> <p>2. «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասի հիմքերով Սահմանադրության 28 հոդվածի 2-րդ մասին եւ 43 հոդվածին հսկասող եւ անվավեր ճանաչել «Կուսակցությունների մասին» ՆՏ օրենքի վիճարկվող դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված փվյալ ակտի 31 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի այն դրույթը, համաձայն որի՝ «Կուսակցությունը ենթակա է լուծարման, եթե Ազգային ժողովի իրար հաջորդող ցանկացած երկու ընտրություններում համամաս-</p>	22 դեկտեմբերի 2006 թվականի ՄԴՈ - 669

			<p>նական ընտրակարգով ընտրություններին չի մասնակցել»:</p> <p>3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասի հիմքերով Սահմանադրության 31 հոդվածին <i>հակասող եւ անվավեր</i> ճանաչել նաեւ «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված ավյալ ակտի 31 հոդվածի 4-րդ մասի այն դրույթը, համաձայն որի՝ «Կուսակցության դատական կարգով լուծարումից հետո մնացած գույքը փոխանցվում է Նայասրանի Նանրապետությանը»:</p>	
13.	<p>«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 21.10.2003թ.)</p>	<p>7-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերության երկրորդ նախադասություն</p>	<p>1. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 7 հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերության երկրորդ նախադասությամբ ամրագրված դրույթը նման խմբագրությամբ՝ «Պաշտպանի՝ դատարաններից փեղեկություններ պահանջելու եւ դատարաններին առաջարկներ ներկայացնելու իրավունքի մասով, պայմանավորված չէ անկախ եւ անկողմնակալ արդարադատություն իրականացնելու անհրաժեշտությամբ, ստեղծում է ներ օրենսդրական հակասություն, հաշվի առնելով նաեւ իրավակիրառական պրակտիկան՝ միջամտություն է դատական իշխանության գործառույթներին եւ <i>չի համապատասխանում</i> ՀՀ Սահմանադրության 39 հոդվածին եւ 97 հոդվածի 1-ին մասի դրույթներին:</p> <p>2. Մարդու իրավունքների պաշտպանի՝ դատարաններից փեղեկություններ պահանջելու իրավունքը՝ կապված օրենքի 10 հոդվածի 1-ին կետի, 12 հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի եւ 17 հոդվածի 1-ին կետի դրույթների կիրառե-</p>	<p>6 մայիսի 2005 թվականի ՍԳՈ - 563</p>

			<p>լիության ապահովման հետ, ենթակա է բավարարման, եթե դա միջամտություն չէ դադարակալ վարույթին՝ չի առնչվում կոնկրետ գործով արդարադատության իրականացմանը, չի վերաբերում դատարանի վարույթում գրնվող գործի քննության նյութական եւ դատավարական բնույթի հարցերին:</p> <p>Մարդու իրավունքների պաշտպանի՝ դատարաններից Կոնկրետություններ պահանջելու իրավունքը՝ կապված օրենքի 10 հոդվածի 1-ին կետի, 12 հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի, 17 հոդվածի 1-ին կետի դրույթների կիրառելիության ապահովման հետ, հակասական իրավակիրառական պրակտիկա չառաջացնելու համար անհրաժեշտ է հստակորեն ամրագրել «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում:</p>	
14.	Մարդուն օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխպարվաստելու մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 16.04.2002թ.)	7-րդ հոդված	<p>1. «Մարդուն օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխպարվաստելու մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածն այն մասով, որով առնչվում է Նայաստանում չիրականացվող փոխպարվաստման հանգամանքներում դիակային դոնորից օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ վերցնելուն, ճանաչել ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասին եւ 14-րդ հոդվածին հակասող եւ անվավեր:</p> <p>2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի հիման վրա՝ վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ «Մարդուն օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխպարվաստելու մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը, 4-րդ եւ 9-րդ հոդվածները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ սահմանադրա-</p>	14 սեպտեմբերի 2010 թվականի ՍԴՈ - 913

			կան դարարանի արտահայտած <u>իրավական դիրքորոշումների շրջանակներում:</u>	
15.	«Շահութահարկի մասին» ՆՏ օրենք (ընդունվել է 30.09.1997թ.)	57-րդ հոդվածի 3-րդ կետը (մինչև 09.01.2009թ. խմբագրու- թյամբ)	1. «Շահութահարկի մասին» ՆՏ օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ կետը (մինչև 09.01.2009թ. խմբագրությամբ) համապատասխանում է ՆՏ Սահմանադրությանը:	7 հունիսի 2011 թվականի ՍԴՌ - 967
16.	«Պեղական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՆՏ օրենք (ընդունվել է 17.12.1997թ.)	13-րդ հոդված	1. ՆՏ Ազգային ժողովի կողմից 17.12.1997թ. ընդունված՝ «Պեղական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՆՏ օրենքի 13 հոդվածի դրույթները համապատասխանում են ՆՏ Սահմանադրությանը:	11 սեպտեմբերի 2007 թվականի ՍԴՌ - 714
17.	«Պեղական կենսաթոշակների մասին» ՆՏ օրենք (ընդունվել է 19.11.2002թ.)	9-րդ հոդվածի 3-րդ մաս	3. «Պեղական կենսաթոշակների մասին» ՆՏ օրենքի 9-րդ հոդվածի երրորդ մասը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան փոխված բովանդակության մասով, որով սահմանափակվում է անձի իրավունքը կենսաթոշակը նշանակելուց հետո կատարել վերընթացություն, ճանաչել ՆՏ Սահմանադրության 31 եւ 83.5-րդ հոդվածների պահանջներին <i>հակասող եւ անվավեր:</i>	10 փետրվարի 2010 թվականի ՍԴՌ - 865
		47-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասեր	1. «Պեղական կենսաթոշակների մասին» ՆՏ օրենքի 47 հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերը ճանաչել ՆՏ Սահմանադրության 18 եւ 37 հոդվածներին <i>հակասող եւ անվավեր:</i> 2. «Սահմանադրական դարարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 12-րդ մասի հիման վրա սույն որոշումը փարածել դրա ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա:	29 հունվարի 2008 թվականի ՍԴՌ - 731

		57-րդ հոդված	1. «Պեպական կենսաթոշակների մասին» ՆՏ օրենքի 57 հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՆՏ Սահմանադրությանը:	23 հոկտեմբերի 2007 թվականի ՍԴՈ - 716
		73-րդ հոդվածի 2-րդ մաս	1. «Պեպական կենսաթոշակների մասին» ՆՏ օրենքի 73 հոդվածի 2-րդ մասը ճանաչել ՆՏ Սահմանադրության 42 հոդվածի 3-րդ մասին հակասող եւ անվավեր : 2. «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 12-րդ մասի հիման վրա սույն որոշումը փարածել նաեւ դրա ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա:	15 հունվարի 2008 թվականի ՍԴՈ - 723
18.	«Պեպական փուրքի մասին» ՆՏ օրենք (ընդունվել է 27.12.1997թ.)	9-րդ հոդվածի 8-րդ կետի «ա» եւ «բ» ենթակետեր	1. «Պեպական փուրքի մասին» ՆՏ օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետի «ա» եւ «բ» ենթակետերը՝ սույն որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումների շրջանակներում , համապատասխանում են ՆՏ Սահմանադրությանը:	25 մայիսի 2010 թվականի ՍԴՈ - 890
		22-րդ հոդված	1. «Պեպական փուրքի մասին» ՆՏ օրենքի 22-րդ հոդվածի առաջին մասը, այնքանով, որքանով չի սահմանում, այլ սուբյեկտներից բացի, արդարացվածին՝ իրավասու պեպական մարմինների եւ պաշտոնապար անձանց ապօրինի գործողությունների (անգործության) հետեւանքով պարճառված վնասի հարուցման հայցերով պեպական փուրքի վճարումից ազատելու վերաբերյալ արտոնություն նախապեսող դրույթ՝ արգելափակելով անձի սահմանադրական իրավունքի իրացումը, ճանաչել ՆՏ Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ մասին եւ 20-րդ հոդվածի 5-րդ մասին հակասող եւ անվավեր : 2. Նաշվի առնելով, որ փվյալ խնդրի իրավաչափ լուծումը	14 դեկտեմբերի 2010 թվականի ՍԴՈ - 929

			<p>եւ օրենքի բացի հաղթահարումը նաեւ օրենսդրական փոփոխությունների եւ համալիր իրավակարգավորման անհրաժեշտություն է ենթադրում, ինչպես նաեւ նկատի ունենալով, որ «Պետական փուրքի մասին» ՏՏ օրենքի՝ վեճի առարկա հողվածի անմիջական անվավեր ճանաչումն անխուսափելիորեն կառաջացնի ծանր հետեւանքներ այդ հողվածի առկա՝ սահմանադրականության խնդիրներ չառաջացնող, դրույթների իրացման եւ մարդու իրավունքների պաշտպանության առումով՝ ՏՏ Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիմքերով սույն որոշման ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանել 2011թ. հունիսի 30-ը:</p>	
19.	<p>«Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենք (ընդունվել է 01.06.2006թ.)</p>	<p>68-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերություն եւ 12-րդ մաս</p>	<p>1. «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերության եւ 12-րդ մասի դրույթները համապատասխանում են ՏՏ Սահմանադրությանը:</p> <p>2. «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 69 հոդվածի 12-րդ մասի դրույթները, որոնք համակարգային առումով փոխկապակցված են օրենքի վիճարկվող դրույթների հետ, ճանաչել ՏՏ Սահմանադրության 19 հոդվածի պահանջներին հսկաստոր եւ անվավեր այն մասով, որով սահմանափակվում է նոր հանգամանքների հիմքով այն անձանց իրավունքների վերականգնման հնարավորությունը, որոնց վերաբերյալ վերջնական դատական ակտի կայացման եւ փվյալ անձի նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ դիմումի (դիմումների) հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն սկսելու օրվա կամ</p>	<p>15 ապրիլի 2008 թվականի ՍԴՈ - 751</p>

			այդ հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշման ընդունման օրվա միջև ընկած ժամանակահատվածը չի գերազանցում վեց ամիսը:	
		68-րդ հոդվածի 15-րդ մասի երկրորդ պարբերություն	2. «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի երկրորդ պարբերությունը համապատասխանում է ՆՏ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի կողմից ներկայացրած հրավական դիրքորոշման շրջանակներում:	11 մայիսի 2007 թվականի ՄԴՈ - 701
		69-րդ հոդվածի 12-րդ մաս	3. «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասով գործի վարույթը կարճել:	25 փետրվարի 2011 թվականի ՄԴՈ - 943
20.	«Մնանկության մասին» ՆՏ օրենք (ընդունվել է 25.12.2006թ.)	3-րդ հոդվածի 2-րդ մասի «...նույնիսկ եթե պարտապանն անվճարունակ չէ» բառակապակցության մասով եւ 3-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը	1. «Մնանկության մասին» ՆՏ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը՝ «...նույնիսկ եթե պարտապանն անվճարունակ չէ» բառակապակցության մասով, ճանաչել ՆՏ Սահմանադրության 31 հոդվածի պահանջներին հակասող եւ անվավեր: 2. «Մնանկության մասին» ՆՏ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը համապատասխանում է ՆՏ Սահմանադրությանը:	25 փետրվարի 2008 թվականի ՄԴՈ - 735
		19-րդ հոդվածի 3-րդ մաս	1. «Մնանկության մասին» ՆՏ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է ՆՏ Սահմանադրությանը:	12 ապրիլի 2011 թվականի ՄԴՈ - 954
		20-րդ հոդվածի 5-րդ մաս	1. «Մնանկության մասին» ՆՏ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները համապատասխանում են ՆՏ Սահմանադրությանը:	11 հունվարի 2011 թվականի ՄԴՈ - 932

21.	<p>«Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 24.09.2003թ.)</p>	11-րդ հոդված	<p>1. «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի 2-րդ մասի դրույթները՝ ՀՀ Սահմանադրության 31, 32 (2-րդ մաս) եւ 37 հոդվածներով ամրագրված իրավունքների իրականացման արգելափակման առումով ճանաչել ՀՀ Սահմանադրության 3, 6 (1-ին, 2-րդ մասեր), 42, 43 եւ 48 (կետ 12) հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:</p> <p>2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 11-րդ մասի պահանջներին համապատասխան՝ անվավեր ճանաչված դրույթների կատարումն ապահովված այլ նորմարիվ ակտերը կամ դրանց համապատասխան դրույթները կորցնում են իրենց իրավաբանական ուժը՝ սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու պահից:</p> <p>3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 11-րդ մասի եւ 68 հոդվածի 12-րդ մասի համաձայն սույն որոշումը փոխարինվում էր ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա:</p>	4 հոկտեմբերի 2006 թվականի ՍԴՈ - 649
22.	<p>Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք (ընդունվել է 06.12.1985թ.)</p>	165-րդ հոդվածի 1-ին մաս	1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 165-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	16 նոյեմբերի 2010 թվականի ՍԴՈ - 924
23.	<p>«Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 18.02.2004թ.)</p>	2-րդ հոդվածի 4-րդ մաս	1. ՀՀ վարչական դատարանի դիմումի հիման վրա գործի վարույթը՝ ..., «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2 հոդվածի 4-րդ մասի՝ իրավակիրառ պրակտիկայում փրված մեկնաբանմամբ, մասով, կարճել:	27 հոկտեմբերի 2009 թվականի ՍԴՈ - 836

		63-րդ հոդվածի 3-րդ մաս	««ԳԼՈՒՐ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63 հոդվածի երրորդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:	24 նոյեմբերի 2009 թվականի ՍԴՈ - 839
24.	«Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 14.05.1996թ.)	17-րդ հոդված	<p>1. «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» ՀՀ օրենքի 17 հոդվածը ամբողջությամբ համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:</p> <p>ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքների ամփոփման հետ կապված դատական վեճերով իրավակիրառական պրակտիկան պերք է համապատասխանի «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» ՀՀ օրենքի 17 հոդվածում ամրագրված՝ գերագույն դատարանի՝ կոլեգիալ կարգով կայացրած որոշումների վերջնական լինելու մասին դրույթին:</p>	19 մայիսի 1997 թվականի ՍԴՈ - 56
25.	«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 30.06.1996թ.)	3-րդ հոդվածի 2-րդ մաս	3. Նայաստանում օրինական կարգով մշտական բնակություն հաստատած փախստականների՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությանը մասնակցելու իրավունքը բացառող՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածի 2-րդ մասի..... դրույթները չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրության 2, 4, 8, 27, 105 հոդվածների պահանջներին:	16 հոկտեմբերի 1999 թվականի ՍԴՈ - 179
26.	«Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 06.02.2002թ.)	5-րդ հոդվածի 2-րդ կետ	1. «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածի 2-րդ կետի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:	18 դեկտեմբերի 2007 թվականի ՍԴՈ - 721

27.	<p>«Փախստականների մասին» ՆՏ օրենք (ընդունվել է 03.03.1999թ.)</p>	18-րդ հոդվածի 8-րդ մաս	<p>2. «Փախստականների մասին» ՆՏ օրենքի 18 հոդվածի 8-րդ մասի դրույթները, այնքանով որքանով վերաբերվում են փախստականների իրավունքի սահմանափակմանը՝ մասնակցելու պետության կառավարմանը (ՆՏ Նախագահի, ՆՏ Ազգային ժողովի ընտրություններին, համապետական հանրաքվեներին), համապարասխանում են ՆՏ Սահմանադրությանը:</p> <p>3. Նայաստանում օրինական կարգով մշտական բնակություն հաստատած փախստականների՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությանը մասնակցելու իրավունքը բացառող՝ ... «Փախստականների մասին» ՆՏ օրենքի 18 հոդվածի 8-րդ մասի դրույթները չեն համապարասխանում ՆՏ Սահմանադրության 2, 4, 8, 27, 105 հոդվածների պահանջներին:</p>	16 հոկտեմբերի 1999 թվականի ՍԴՈ - 179
		25-րդ հոդված	<p>1. ՆՏ Ազգային ժողովի կողմից 1999 թվականի մարտի 3-ին ընդունված՝ «Փախստականների մասին» ՆՏ օրենքի 25 հոդվածը՝ ՆՏ Ազգային ժողովի կողմից 2004 թվականի մարտի 3-ին ընդունված ՆՕ-49-Ն օրենքի խմբագրությամբ, մինչև 2008 թվականի նոյեմբերի 27-ին ՆՏ Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Փախստականների եւ ապաստանի մասին» ՆՕ-211-Ն ՆՏ օրենքի 65 հոդվածի երկրորդ մասի ուժով 2009 թվականի հունվարի 24-ից ուժը կորցնելը, համապարասխանել է ՆՏ Սահմանադրությանը:</p>	20 հոկտեմբերի 2009 թվականի ՍԴՈ - 834
28.	<p>«Փաստաբանության մասին» ՆՏ օրենք (ընդունվել է 14.12.2004թ.)</p>	29.1-րդ հոդված	<p>4. «Փաստաբանության մասին» ՆՏ օրենքի 29.1. հոդվածը ճանաչել ՆՏ Սահմանադրության 14.1., 18 եւ 19 հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:</p>	8 հոկտեմբերի 2008 թվականի ՍԴՈ - 765

			<p>7. Նկարի ունենալով, որ սահմանադրական դատարանի որոշման ընդունման պահից սույն գործով վեճի առարկա իրավանորմերի վերացումը կարող է առաջացնել իրավական բաց՝ խաթարելով այդ նորմերի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, ՆՏ Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 15-17-րդ մասերի դրույթների համաձայն սույն որոշման եզրափակիչ մասի 2-րդ, 3-րդ եւ 4-րդ կետերով ՆՏ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել 2008 թվականի դեկտեմբերի 31-ը՝ ՆՏ Ազգային ժողովին հնարավորություն տալով օրենսդրական կարգավորումները համալիր ձեւով համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:</p>	
29.	<p>ՆՏ աշխատանքային օրենսգրք (ընդունվել է 09.11.2004թ.)</p>	<p>73-րդ հոդված եւ 75-րդ հոդվածի 3-րդ մաս</p>	<p>1. ՆՏ Սահմանադրության 32 հոդվածի 3-րդ մասին եւ 43 հոդվածին հակասող եւ անվավեր ճանաչել ՆՏ աշխատանքային օրենսգրքի 73 հոդվածում եւ 75 հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթները՝ այնքանով, որքանով գործադուլի իրավունքը պայմանավորում են միայն կոլեկտիվ պայմանագրի կնքման հետ կապված կոլեկտիվ վեճը չլուծվելու հանգամանքով եւ արգելափակում են գործադուլի իրավունքը նոր հանգամանքներում՝ նաեւ «...այն պարավորություններին ենթարկվելու պայմանով, որոնք կարող են ծագել նախօրոք կնքված կոլեկտիվ համաձայնագրերից»:</p> <p>2. «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասի հիմքերով ՆՏ Սահմանադրության 32 հոդվածի 3-րդ մասին եւ 43 հոդվածին հակասող եւ</p>	<p>7 փետրվարի 2007 թվականի ՄԴՆ - 677</p>

			<i>անվավեր</i> ճանաչել նաև ՆՏ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված փվյալ ակտի 60 հոդվածի 2-րդ մասի վերջին պարբերության՝ «...իսկ գործադուլ կազմակերպելն արգելվում է» դրույթը:	
	113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և 113-րդ հոդվածի 3-րդ մաս	<p>1. ՆՏ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետը համապարասխանում է ՆՏ Սահմանադրությանը:</p> <p>2. ՆՏ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի երրորդ մասը համապարասխանում է ՆՏ Սահմանադրությանը:</p>	1 հունիսի 2010 թվականի ՄԴՌ - 891	
	113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը և 114-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետը	<p>1. ՆՏ աշխատանքային օրենսգրքի 113 հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը՝ այնքանով, որքանով չի երաշխավորում հավասար և ոչ խտրական իրավապայմանագրային հարաբերություններ աշխատողի և գործատուի միջև, ճնաչել ՆՏ Սահմանադրության 14.1. և 32 հոդվածներին <i>հակասող և անվավեր</i>:</p> <p>2. ՆՏ աշխատանքային օրենսգրքի 114 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետը՝ «բացառությամբ այն դեպքերի, երբ աշխատողը ձեռք է բերել ծերության կենսաթոշակ ստանալու իրավունք կամ ստանում է այդ կենսաթոշակը» բառակապակցության մասով ճանաչել ՆՏ Սահմանադրության 14.1. և 32 հոդվածներին <i>հակասող և անվավեր</i>:</p>	24 փետրվարի 2009 թվականի ՄԴՌ - 792	
	221-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը	1. ՆՏ աշխատանքային օրենսգրքի 221-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետը՝ «...ինչպես նաև կամայականություն դրսևորելը» բառակապակցության մասով ճանաչել	15 հունիսի 2010 թվականի ՄԴՌ - 896	

		<p>ՆՏ Սահմանադրության 1, 3, 14.1-րդ հոդվածների պահանջներին հսկաստղ եւ անվավեր:</p>		
	265-րդ հոդվածի 2-րդ մաս	<p>1. ՆՏ աշխարհաբային օրենսգրքի 265-րդ հոդվածի երկրորդ մասը՝ առաջին նախադասության «կամ այլ» բառակապակցության մասով, ճանաչել ՆՏ Սահմանադրության 1-ին հոդվածի, 18-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի եւ 32-րդ հոդվածի պահանջներին հսկաստղ եւ անվավեր:</p>	7 հուլիսի 2010 թվականի ՍԴՈ - 902	
30.	ՆՏ դափական օրենսգիրք (ընդունվել է 21.02.2007թ.)	13-րդ հոդվածի 6-րդ կետը	<p>6. ՆՏ դափական օրենսգրքի 13 հոդվածի 6-րդ կետը համապատասխանում է ՆՏ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ ՆՏ սահմանադրական դափարանի արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:</p>	8 հոկտեմբերի 2008 թվականի ՍԴՈ - 765
		14-րդ հոդվածի 3-րդ մաս	<p>1. ՆՏ դափական օրենսգրքի 14 հոդվածի 3-րդ մասը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան փրված բովանդակության շրջանակներում, ճանաչել ՆՏ Սահմանադրության 3 հոդվածի 2-րդ մասի, 18 հոդվածի 1-ին մասի, 55 հոդվածի 11-րդ մասի եւ 95 հոդվածի պահանջներին հսկաստղ եւ անվավեր:</p> <p>2. «Սահմանադրական դափարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասի հիմքերով ՆՏ Սահմանադրությանը հսկաստղ եւ անվավեր ճանաչել նաեւ ՆՏ դափական օրենսգրքի 14 հոդվածի 5-րդ մասը:</p> <p>3. Առաջնորդվելով ՆՏ Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դափարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 15-17-րդ մասերի դրույթներով, նկատի ունենալով, որ դափական համակարգի հետագա</p>	2 դեկտեմբերի 2008 թվականի ՍԴՈ - 782

			բարեփոխումների հայեցակարգային մոտեցումների շրջանակներում նաև վեճի առարկա հիմնահարցերի վերաբերյալ նախապարաստվում են օրենսդրական բարեփոխումներ, հաշվի առնելով, որ սահմանադրական դատարանի որոշման ընդունման պահից սույն գործով վեճի առարկա իրավանորմերի վերացումը կարող է առաջացնել իրավական բաց, սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին եւ 2-րդ կետերով ՏՏ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել 2009թ. մարտի 1-ը:	
		14-րդ հոդվածի 4-րդ մաս	1. ՏՏ դատական օրենսգրքի 14 հոդվածի 4-րդ մասը համապարասխանում է ՏՏ Սահմանադրությանը:	23 դեկտեմբերի 2008 թվականի ՄԴՌ - 786
		91-րդ հոդվածի 4-րդ մաս	1. ... ՏՏ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մասը համապարասխանում են ՏՏ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:	28 սեպտեմբերի 2010 թվականի ՄԴՌ - 918
		94-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «ավանդարտ» բառից հետո՝ ամբողջությամբ եւ 3-րդ ամբողջությամբ եւ 3-րդ մաս	1. ... ՏՏ դատական օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «ավանդարտ» բառից հետո՝ ամբողջությամբ, եւ 3-րդ մասով գործի վարույթը կարճել՝ հիմնվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 32 հոդվածի 3-րդ մասի, 60 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի եւ 69 հոդվածի 1-ին եւ 7-րդ մասերի վրա:	4 ապրիլի 2008 թվականի ՄԴՌ - 747
31.	«ՏՏ դատական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու մասին» ՏՏ օրենք (ընդունվել է 22.02.2007թ.)	2.1-րդ հոդված	1. «ՏՏ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատի դիմումի հիման վրա՝ «ՏՏ դատական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու մասին» ՏՏ օրենքի 2.1 հոդվածի՝ ՏՏ Սահմանադրությանը համապարասխանության հար-	7 հուլիսի 2009 թվականի ՄԴՌ - 811

			ցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:	
32.	ՆՆ ընդամենական օրենսգիրք (ընդունվել է 09.11.2004թ.)	53-րդ հոդվածի 3-րդ մաս	1. ՆՆ ընդամենական օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները համապատասխանում են ՆՆ Սահմանադրությանը:	5 հոկտեմբերի 2010 թվականի ՄԴՈ - 919
33.	ՆՆ ընդամենական օրենսգիրք (ընդունվել է 05.02.1999թ.)	2-րդ հոդվածի 1-ին կետի և 122-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետեր	1. ՆՆ ընդամենական օրենսգրքի 2 հոդվածի 1-ին կետի դրույթը՝ այն իմաստով, որ պետության կառավարմանը (ՆՆ Նախագահի, ՆՆ Ազգային ժողովի ընտրություններին, համապետական հանրաքվեներին) մասնակցելու իրավունքը վերապահում է միայն ՆՆ փաստաթուղթերին լրացած քաղաքացիներին, համապատասխանում է ՆՆ Սահմանադրությանը: 3. Նայաստանում օրինական կարգով մշտական բնակություն հաստատած փախստականների՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությանը մասնակցելու իրավունքը բացառող՝ ... ՆՆ ընդամենական օրենսգրքի 2 հոդվածի 1-ին կետի, 122 հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ... դրույթները չեն համապատասխանում ՆՆ Սահմանադրության 2, 4, 8, 27, 105 հոդվածների պահանջներին:	16 հոկտեմբերի 1999 թվականի ՄԴՈ - 179
		10-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերություն	1. ՆՆ ընդամենական օրենսգրքի 10 հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերության դրույթները համապատասխանում են ՆՆ Սահմանադրությանը սույն որոշման մեջ ՆՆ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:	8 մայիսի 2009 թվականի ՄԴՈ - 803
		35-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի երկրորդ	1. ՆՆ ընդամենական օրենսգրքի 35 հոդվածի 1-ին կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի և 36 հոդվածի 1-ին կետի դրույթները՝ այն մասով, որով նախատեսվում է կենտրոնական և	7 նոյեմբերի 2006 թվականի ՄԴՈ - 664

		<p>նախադասություն, 4-րդ ենթակետը, 36-րդ հոդվածի 1-ին կետը</p>	<p>ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների կազմում նշանակել դատավորների, ճանաչել ՏՏ Սահմանադրության 19 հոդվածի 1-ին մասին եւ 98 հոդվածի 1-ին մասին հակասող եւ անվավեր:</p> <p>2. «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասի հիման վրա ՏՏ Սահմանադրության 19 հոդվածի 1-ին մասին եւ 98 հոդվածի 1-ին մասին հակասող եւ անվավեր ճանաչել նաեւ ՏՏ ընտրական օրենսգրքի 35 հոդվածի 2-րդ կետի եւ 38 հոդվածի 3.1. կետի 1-ին եւ 2-րդ ենթակետերի այն դրույթները, որոնցով նախատեսվում է կենտրոնական եւ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների թափուր փեղերը լրացնել դատավորների թվից:</p> <p>3. «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 68 հոդվածի 11-րդ մասի պահանջներին համապատասխան՝ անվավեր ճանաչված դրույթների կարարումն ապահովված այլ նորմատիվ ակտերը կամ դրանց համապատասխան դրույթները կորցնում են իրենց իրավաբանական ուժը՝ սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու պահից:</p>	
		<p>40.1-րդ հոդվածի 3-րդ կետի՝ «Դիմումը պետք է լինի ստորագրված դիմողի կողմից» դրույթ</p>	<p>1. ՏՏ ընտրական օրենսգրքի 40.1 հոդվածի 3-րդ կետի՝ «Դիմումը պետք է լինի ստորագրված դիմողի կողմից» դրույթը համապատասխանում է ՏՏ Սահմանադրությանը:</p>	<p>21 դեկտեմբերի 2007 թվականի ՄԴՈ -722</p>

34.	<p>ՆՆ ընտրական օրենսգիրք (ԱԺ կողմից 2002թ. հուլիսի 3-ին ընդունված «ՆՆ ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՆՆ օրենքի խմբագրությամբ) (ընդունվել է 05.02.1999թ.)</p>	<p>14-րդ հոդվածի 3-րդ կետը</p>	<p>1. Ազգային ժողովի կողմից 1999 թվականի փետրվարի 5-ին ընդունված՝ ՆՆ ընտրական օրենսգրքի (Ազգային ժողովի կողմից 2002թ. հուլիսի 3-ին ընդունված՝ «ՆՆ ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՆՆ օրենքի խմբագրությամբ) 14-րդ հոդվածի 3-րդ կետի «այդ թվում՝ դատարանի վճռով» արտահայտությունն այնքանով, որքանով սահմանափակում է խախտված իրավունքի դատական պաշտպանության հնարավորությունը, <i>չի համապատասխանում</i> ՆՆ Սահմանադրության 38 հոդվածի 2-րդ մասին, դրանով իսկ <i>անհամապատասխանություն</i> առաջացնելով նաև ՆՆ Սահմանադրության 1,2,3,4 և 27-րդ հոդվածների հետ և Սահմանադրության 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն իրավաբանական ուժ չունի:</p>	<p>1 հոկտեմբերի 2002 թվականի ՄԴՌ - 389</p>
35.	<p>ՆՆ կառավարության «Երեւանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում կառուցապարման ծրագրերի իրականացման միջոցառումների մասին» թիվ 1151-Ն որոշում (ընդունվել է 01.08.2002թ.)</p>		<p>3. ՆՆ կառավարության 1 օգոստոսի 2002թ. թիվ 1151-Ն որոշումը՝ «Երեւանի կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում կառուցապարման ծրագրերի իրականացման միջոցառումների մասին», հիմքում ունենալով ՆՆ քաղաքացիական օրենսգրքի 218 և ՆՆ հողային օրենսգրքի 104 հոդվածների դրույթները, հասարակության և պետության կարիքների համար սեփականության հարկադիր օտարման իրավահարաբերությունների ենթաօրենսդրական կարգավորման առումով <i>չի համապատասխանում</i> ՆՆ Սահմանադրության 3 , 8 (1-ին մաս), 31 (3-րդ մաս), 43, 83.5. (1-ին և 2-րդ կետեր), 85 (2-րդ մաս) հոդվածների պահանջներին:</p> <p>4. Առաջնորդվելով ՆՆ Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի դրույթներով և հաշվի առնելով, որ ՆՆ Ազգային ժողովը և ՆՆ կառավարությունը պարտավոր են հնա-</p>	<p>18 ապրիլի 2006 թվականի ՄԴՌ - 630</p>

			<p>րավոր սեղմ ժամկետներում քննության առարկա հիմնախնդրին առնչվող բազմաթիվ իրավական ակտեր ՆՏ Սահմանադրության եւ սահմանադրական դատարանի որոշման պահանջներին համապատասխանեցնել եւ օրենքով հստակ կանոնակարգել բացառիկ՝ գերակա հանրային շահերով պայմանավորված հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման իրավական ռեժիմը, սույն որոշման մեջ ՆՏ Սահմանադրությանը ճիշտապատասխանող ճանաչված իրավական նորմերի ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել օրենքի հիման վրա նման իրավական ռեժիմի ուժի մեջ մտնելու պահը, բայց ոչ ուշ, քան 2006թ. հոկտեմբերի 1-ը:</p>	
36.	<p>ՆՏ կառավարության 2004 թվականի փետրվարի 5-ի թիվ 207-Ն որոշում</p>		<p>2. ՆՏ Սահմանադրության 3-րդ հոդվածին (2-րդ մաս), 85-րդ հոդվածին (2-րդ մաս), 43-րդ հոդվածին (2-րդ մաս) հսկասող ճանաչել ՆՏ կառավարության 2004 թվականի փետրվարի 5-ի թիվ 207-Ն որոշումը՝ «Նայրենական մեծ պարերազմի մասնակիցների եւ հաշմանդամների, այլ պետությունների քարածքներում մարտական գործողությունների մասնակիցների, զոհված զինծառայողների ընդհանրության արտոնությունների եւ երաշխիքների փոխադարձաբար ճանաչման մասին» 1994 թվականի ապրիլի 15-ին ԱՊՆ շրջանակներում կնքված եւ ՆՏ համար 1996 թվականի փետրվարի 26-ից ուժի մեջ մտնող համաձայնագրի 1-ին հավելվածի 2.3 կետում նշված անձանց իրավունքների իրացման կարգ չնախատեսելու եւ այդ իրավունքներն արգելափակելու մասով՝ հաշվի առնելով սույն որոշման պարճառաբանական մասի 6-րդ եւ 7-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումները եւ ի գիտություն ընդունելով ՆՏ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 668-Ն որոշումը:</p>	<p>3 հունիսի 2011 թվականի ՄԴՆ - 966</p>

37.	ՆՏ հողային օրենսգրք (ընդունվել է 02.05.2001թ.)	76-րդ հոդվածի 2-րդ մաս	1. ՆՏ հողային օրենսգրքի 76 հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությունը համապատասխանում է ՆՏ Սահմանադրությանը:	18 մարտի 2008 թվականի ՍԴՈ - 741
		100-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ	1. ... ՆՏ հողային օրենսգրքի 100 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթները համապատասխանում են ՆՏ Սահմանադրությանը:	10 հոկտեմբերի 2006 թվականի ՍԴՈ - 650
		104, 106 եւ 108-րդ հոդվածներ	<p>2. ՆՏ հողային օրենսգրքի`</p> <p>ա) 104 հոդվածը` հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության հարկադիր օտարման իրավահարաբերությունների կանոնակարգման առումով չի համապատասխանում ՆՏ Սահմանադրության 8 (1-ին մաս), 31 (3-րդ մաս), 43 հոդվածների պահանջներին,</p> <p>բ) 106 հոդվածը չի համապատասխանում ՆՏ Սահմանադրության 31 (3-րդ մաս), 43 եւ 83.5. (1-ին եւ 2-րդ կետեր) հոդվածների պահանջներին,</p> <p>գ) 108 հոդվածը չի համապատասխանում ՆՏ Սահմանադրության 3, 31 (3-րդ մաս) եւ 43 հոդվածների պահանջներին:</p> <p>4. Առաջնորդվելով ՆՏ Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի դրույթներով եւ հաշվի առնելով, որ ՆՏ Ազգային ժողովը եւ ՆՏ կառավարությունը պարտավոր են հնարավոր սեղմ ժամկետներում քննության առարկա հիմնախնդրին առնչվող բազմաթիվ իրավական ակտեր ՆՏ Սահմանադրության եւ սահմանադրական դատարանի որոշման պահանջներին համապատասխանեցնել եւ օրենքով հստակ կանոնակարգել բացառիկ` գերակա հանրային շահերով պայմանավորված հասարակության եւ պետու-</p>	18 ապրիլի 2006 թվականի ՍԴՈ - 630

			թյան կարիքների համար սեփականության օրարման իրավական ռեժիմը, սույն որոշման մեջ ՆՏ Սահմանադրությանը <i>չհամապատասխանող</i> ճանաչված իրավական նորմերի ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել օրենքի հիման վրա նման իրավական ռեժիմի ուժի մեջ մտնելու պահը, բայց ոչ ուշ, քան 2006թ. հոկտեմբերի 1-ը:	
38.	ՆՏ մաքսային օրենսգիրք (ընդունվել է 06.07.2000թ.)	203-րդ հոդված	1. ՆՏ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածը համապատասխանում է ՆՏ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված <u>իրավական դիրքորոշումների շրջանակներում:</u>	12 հոկտեմբերի 2010 թվականի ՍԴՈ - 920
39.	«ՆՏ-ում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՆՏ օրենք (ընդունվել է 17.05.2000թ.)	1-ին հոդվածի 6-րդ մաս	1. ՆՏ վարչական դատարանի դիմումի հիման վրա գործի վարույթը՝ «ՆՏ-ում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՆՏ օրենքի 1-ին հոդվածի 6-րդ մասի, իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանմամբ, մասով, կարճել:	27 հոկտեմբերի 2009 թվականի ՍԴՈ - 836
40.	ՆՏ վարչական դատավարության օրենսգիրք (ընդունվել է 28.11.2007թ.)	3-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի՝ «խախտվել» բառից հետո «նրա» արտահայտությունը	1. ՆՏ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի՝ «խախտվել» բառից հետո «նրա» արտահայտությունը համապատասխանում է ՆՏ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված <u>իրավական դիրքորոշումների շրջանակներում:</u>	7 սեպտեմբերի 2010 թվականի ՍԴՈ - 906
		8-րդ հոդվածի 1-ին մաս	1. ՆՏ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ գլուխը, այնքանով, որքանով բացառում է վարչաիրավական հարաբերություններից ածանցվող քաղաքացիաիրավական վեճի լուծումը մեկ գործի սահմաններում, ճանաչել ՆՏ	3 փետրվարի 2009 թվականի ՍԴՈ - 787

			Սահմանադրության 18 (1-ին մաս) և 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին հսկասող և անվավեր:	
	68-րդ հոդվածի 3-րդ մաս	<p>1. ՆՆ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է ՆՆ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված հրավական դիրքորոշումների շրջանակներում՝ հաշվի առնելով նաև վարչական մարմնի անգործության դեմ դատական պաշտպանության հնարավորությունը:</p> <p>2. ՆՆ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՆՆ վարչական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետն այն մասով, որը վարչական ակտի հետ մեկտեղ չի ներառում վարչական մարմնի գործողությունը և անգործությունը, ճանաչել ՆՆ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներին հսկասող և անվավեր:</p>	22 փետրվարի 2011 թվականի ՍԴՈ - 942	
	73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ	<p>1. «Զաղաքացի Արտակ Զեյնալյանի դիմումի հիման վրա՝ ՆՆ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ ՆՆ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:</p>	30 նոյեմբերի 2010 թվականի ՍԴՈ - 927	
	115-րդ հոդված և 118-րդ հոդվածի 1-ին մաս	<p>4. ՆՆ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասը և 118-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել ՆՆ Սահմանադրության 1-ին հոդվածի, 18-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին հսկասող և անվավեր:</p>	25 նոյեմբերի 2008 թվականի ՍԴՈ - 780	

			<p>5. Առաջնորդվելով ՆՏ Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 15-17-րդ մասերի դրույթներով, նկատի ունենալով, որ սահմանադրական դատարանի որոշման ընդունման պահից սույն գործով վեճի առարկա իրավանորմերի վերացումը կարող է առաջացնել իրավական բաց՝ խաթարելով այդ նորմերի վերացմամբ հաստատվելիք իրավական անվրանգությունը, սույն որոշման եզրակացության մասի 4-րդ կետով ՆՏ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել 2009թ. մարտի 31-ը՝ ՆՏ Ազգային ժողովին հնարավորություն տալով օրենսդրական կարգավորումները համալիր ձեւով համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:</p>	
	118 եւ 118.6-րդ հոդվածներ		<p>1. ՆՏ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածը՝ սույն որոշման մեջ ՆՏ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում համապատասխանում է ՆՏ Սահմանադրությանը:</p> <p>2. ՆՏ վարչական դատավարության օրենսգրքի 118.6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «առկա է» եւ «հանգեցրել է» բառակապակցությունները՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրանց տրված մեկնաբանության շրջանակներում ճանաչել ՆՏ Սահմանադրության 19-րդ հոդվածին (1-ին մաս) հակասող եւ անվավեր:</p> <p>3. Առաջնորդվելով ՆՏ Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68-րդ հոդվածի 15-17-րդ մասերի դրույթներով</p>	13 ապրիլի 2010 թվականի ՄԴՈ - 873

			<p>եւ հաշվի առնելով, որ վարչական արդարադատության առկա երկաստիճան համակարգի գործունակության եւ արդյունավետության անհրաժեշտ մակարդակի ապահովումը կամ հիմնախնդրին համակարգային այլ լուծումներ փառ պահանջում են օրենսդրական համարժեք կարգավորումներ, սույն որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետով ՆՏ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել 2010թ. դեկտեմբերի 1-ը:</p>	
		141-րդ հոդվածի 1-ին մաս	<p>1. ՆՏ վարչական դատարարության օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասն այն մասով, որով արգելափակվում է անձի իրավունքը՝ դատարարական իրավունքի նորմի խախտման հիմքով բողոքարկելու նորմափիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի դատական ակտերը, ճանաչել ՆՏ Սահմանադրության 3-րդ, 18-րդ եւ 19-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր:</p>	8 փետրվարի 2011 թվականի ՍԴՈ - 936
		151 եւ 152-րդ հոդվածներ	<p>1. ՆՏ վարչական դատարարության օրենսգրքի 151-րդ հոդվածը համապատասխանում է ՆՏ Սահմանադրությանը:</p> <p>2. ՆՏ վարչական դատարարության օրենսգրքի 152-րդ հոդվածը համապատասխանում է ՆՏ Սահմանադրությանը:</p>	5 փետրվարի 2010 թվականի ՍԴՈ - 864
41.	ՆՏ քաղաքացիական օրենսգիրք (ընդունվել է 05.05.1998թ.)	2-րդ հոդված	<p>1. ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածը համապատասխանում է ՆՏ Սահմանադրությանը:</p>	25 նոյեմբերի 2008 թվականի ՍԴՈ - 780

	10-րդ հոդվածի 2-րդ մաս, 302-րդ հոդվածի 1-ին մաս	<p>1. ՆՆ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է ՆՆ Սահմանադրությանը:</p> <p>2. ՆՆ քաղաքացիական օրենսգրքի 302-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՆՆ Սահմանադրությանը:</p>	4 մարտի 2011 թվականի ՄԴՈ - 944
	187 եւ 280-րդ հոդվածներ	<p>1. «Սահմանադրական դատարանի մասին» ՆՆ օրենքի 32 հոդվածի 1-ին եւ 3-րդ կետերի, 60 հոդվածի 1-ին կետի պահանջների հիման վրա ՆՆ քաղաքացիական օրենսգրքի 280 հոդվածի 1-ին մասով գործի քննությունը կարճել:</p> <p>2. ՆՆ քաղաքացիական օրենսգրքի 280 հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է ՆՆ Սահմանադրությանը:</p> <p>3. ՆՆ քաղաքացիական օրենսգրքի 187 հոդվածը համապատասխանում է ՆՆ Սահմանադրությանը:</p>	21 նոյեմբերի 2006 թվականի ՄԴՈ - 667
	210-րդ հոդվածի 1-ին մաս եւ 216-րդ հոդվածի 2-րդ մաս	<p>1. ՆՆ քաղաքացիական օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՆՆ Սահմանադրությանը:</p> <p>2. ՆՆ քաղաքացիական օրենսգրքի 216-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականությունը որոշելու մասով գործի վարույթը կարճել:</p>	29 հունիսի 2010 թվականի ՄԴՈ - 901
	218-րդ հոդված	<p>1. ՆՆ քաղաքացիական օրենսգրքի 218 հոդվածը՝ հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության հարկադիր օտարման իրավահարաբերությունների կանոնակարգման առումով <i>չի համապատասխանում</i> ՆՆ Սահմանադրության 3, 8 (1-ին մաս), 31 (3-րդ մաս), 43 հոդվածների պահանջներին:</p>	18 ապրիլի 2006 թվականի ՄԴՈ - 630

			<p>4. Առաջնորդվելով ՆՏ Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի դրույթներով եւ հաշվի առնելով, որ ՆՏ Ազգային ժողովը եւ ՆՏ կառավարությունը պարտավոր են հնարավոր սեղմ ժամկետներում քննության առարկա հիմնախնդրին առնչվող բազմաթիվ իրավական ակտեր ՆՏ Սահմանադրության եւ սահմանադրական դատարանի որոշման պահանջներին համապատասխանեցնել եւ օրենքով հստակ կանոնակարգել բացառիկ՝ գերակա հանրային շահերով պայմանավորված հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման իրավական ռեժիմը, սույն որոշման մեջ ՆՏ Սահմանադրությանը <i>չհամապատասխանող</i> ճանաչված իրավական նորմերի ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել օրենքի հիման վրա նման իրավական ռեժիմի ուժի մեջ մտնելու պահը, բայց ոչ ուշ, քան 2006թ. հոկտեմբերի 1-ը:</p>	
		280-րդ հոդվածի 1-ին մաս	<p>1. ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 280 հոդվածի 1-ին մասի դրույթները համապատասխանում են ՆՏ Սահմանադրությանը:</p>	10 հոկտեմբերի 2006 թվականի ՄԴՈ - 650
		300-րդ հոդվածի 2-րդ կետ	<p>2. ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 289 հոդվածի դրույթները համապատասխանում են ՆՏ Սահմանադրությանը:</p> <p>3. ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 300 հոդվածի 2-րդ կետի դրույթները համապատասխանում են ՆՏ Սահմանադրությանը:</p>	15 մայիսի 2007 թվականի ՄԴՈ - 702
		313-րդ հոդված	<p>1. ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 313 հոդվածում սահմանված դրույթները համապատասխանում են ՆՏ Սահմանադրությանը:</p>	3 հուլիսի 2007 թվականի ՄԴՈ - 705

	470-րդ հոդված	<p>1. ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 470 հոդվածը համապարասխանում է ՆՏ Սահմանադրության 3 հոդվածին, 8 հոդվածի 1-ին մասին եւ 31 հոդվածի 2-րդ մասին:</p>	26 սեպտեմբերի 2006 թվականի ՍԴՌ - 648
	1003.1-րդ հոդվածի 1-ին կեր (2007թվականի ապրիլի 9-ի խմբագրությունը)	<p>1. ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 1003.1-րդ հոդվածի 1-ին կերը համապարասխանում է ՆՏ Սահմանադրությանը՝ հաշվի առնելով, որ ՆՏ Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 83.5-րդ հոդվածի 2-րդ կերի իմաստով «պարականություն» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը ենթադրում է Սահմանադրությամբ եւ օրենքներով՝ իրավունքի սուբյեկտի կամքից անկախ, վերջինիս համար սահմանված պարտադիր վարքագծի կանոն, իսկ «պարավորություն» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը ենթադրում է իրավունքի ուժով կամ իր ազատ կամաարտահայտմամբ եւ սեփական գործողությունների շնորհիվ սրանձնած համապարասխան վարքագիծ:</p> <p>Իրավակիրառական պրակտիկայում փվյալ հասկացությունները չեն կարող մեկնաբանվել ու կիրառվել այլ կերպ, որը կհակասի դրանց՝ սույն որոշման մեջ արտահայտված <u>սահմանադրաիրավական բովանդակությունը:</u></p>	14 հունիսի 2011 թվականի ՍԴՌ - 975
